ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » մայիսի 2017 թվականի թիվ 115-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2017 թվականի հունվարի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին>> թիվ 1-Ա որոշման.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իմ ղեկավարությամբ ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտ համայնքում 2017 թվականի հունիսի 20-ին անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն (այսուհետ՝ ուսումնավարժություն) <<Գազամատակարարման ցանցում պայթյունի հետևանքով փլուզված շենքում որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը>> թեմայով:

2. Հաստատել.

1) ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելված 1-ի.

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Ուսումնավարժությանը ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության քաղաքային որոնողափրկարարական թիմին.

2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի ոստիկանության բաժնից 1 խումբ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 2-րդ սպայական վաշտի 1 հաշվարկ.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Աղստև» մասնաճյուղի վթարավերականգնողական խմբին.

4) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տավուշի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի Իջևանի մասնաճյուղի վթարավերականգնողական խմբին.

5) «Վեոլիա ջուր » ՓԲԸ-ի «Արևմուտք» տարածքային տնօրինության Իջևանի տեղամասի վթարավերականգնողական խմբին.

6) «Իջևանի բժկական կենտրոն» ՓԲԸ-ից 1 շտապօգնության բրիգադ:

4. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, փրկարարական ծառայության գնդապետ Ա. Հովակիմյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժության պլանավորող փաստաթղթերի ժամանակին մշակումը և հաստատումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի.

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի.

3) կազմակերպել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված ուժերի միջև ուսումնավարժության նախապատրաստման հարցերով.

4) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2017 թվականի հունիսի 16–ին.

5) ուսումնավարժության անցկացումից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել ուսումնավարժության անցկացման մասին ամփոփագիրը:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի գործնական միջոցառումների խմբի ղեկավար, փրկարարական ծառայության փոխգնդապետ Ա. Մելիքսեթյանին՝

1) կազմակերպել գործնական միջոցառումների տեղամասերի նախապատրաստումը՝ համագործակցելով արձագանքող ուժերի ղեկավար կազմի հետ.

2) հսկողություն իրականացնել՝ գործնական միջոցառումների իրականացման ընթացքում մասնակիցների կողմից անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ.

3) գործնական միջոցառումների իրականացման ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտման դեպքում անհապաղ դադարեցնել իրականցվող գործողությունները և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները.

2) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով.

3) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

4) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին.

5) գործնական միջոցառումներ իրականացնելիս խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:

7. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ռոբերտ Ներսեսյանին՝ ուսումնավարժությանը մասնակցող տրանսպորտային միջոցները, տեխնիկան և սարքավորումները ապահովել անհրաժեշտ վառելիքաքսուքային նյութերով:

8. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ԱԲՈՎՅԱՆ

2017թ. մայիսի 22
ք. Իջևան

Հավելված 1.
ՀՀ Տավուշի մարզպետի
2017թ. մայիսի _22 -ի
թիվ _115-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՅԱՑԻՆ ՊԼԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշ.կատարման մասին
1	2	3	4	5
Փաստաթղթերի մշակում				
1.	Ելակետային տվյալների որոշում՝ վայր, մտահղացում, անցկացման կարգ	Մինչև 22.05	ղեկավար, ղեկավարման շտաբի պետ	
2.	Անցկացման պլանի մշակում	Մինչև 25.05	Ղեկավարման շտաբի պետ	
3.	Մտահղացման մշակում սխեմայի վրա	Մինչև 26.05	Ղեկավարման շտաբի պետ	
4.	Փաստաթղթերի ներկայացում հաստատման	Մինչև 29.05	Ղեկավարման շտաբի պետ	
Ուսուցանվողների նախապատրաստումը				
5.	Կազմակերպման և անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում	Մինչև 09.06	Ղեկավարման շտաբի պետ	
6.	«Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 855-Ն որոշման ուսումնասիրում	Մինչև 09.06	Ղեկավարման շտաբի պետ	
7.	Փոխհամագործակցության պլանների և ԱԻ ոլորտին առնչվող իրավական ակտերի ուսումնասիրում	Մինչև 13.06	Ղեկավարման շտաբի պետ	
8.	Ուսումնավարժությանը ընդգրկվող տեխնիկայի վիճակի ստուգում	Մինչև 16.06	Ղեկավարման շտաբի պետ	
9.	Անվտանգության տեխնիկայի կանոնների հրահանգավորում	Մինչև 16.06	Գործնական միջոցառումների խմբի ղեկավար Ստորաբաժանումների հրամանատարներ	

1	2	3	4	5
Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում				
10.	Գործնական տեղամասերի ուսումնասիրում	Մինչև 24.05	Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբի պետ, գործնական միջոցառումների խմբի ղեկավար	
11.	Տեղամասերի նախապատրաստում	Մինչև 16.06	Ղեկավարման շտաբի պետ, գործնական միջոցառումների խմբի ղեկավար	

<< Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժ/պ Ֆ. Ափինյան

Հավելված 2.
ՀՀ Տավուշի մարզպետի
2017թ. մայիսի __22 -ի
թիվ ___115-Ա որոշման

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ ԿԱԶՄ

Հ/Հ	Ազգանուն, անուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Հովակիմյան Արթուր	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ–ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ
2	Ներսեսյան Ռոբերտ	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ – ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետի տեղակալ ապահովման հարցերով
3	Սաֆարյան Նարեկ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ ՃԿԿ) օպերատիվ հերթապահ հերթափոխի կրտսեր հրահանգիչ, փ/ծ ենթասպա ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետի տեղակալ կապի կազմակերպման գծով
4	Փիրումյան Վահան	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ՃԿԿ պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ–խաղարկման և վերլուծության խմբի ղեկավար
5	Ասլիյան Մելիք	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր–խաղարկման և վերլուծության խմբի անդամ
6	Հովսեփյան Հրայր	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ՃԿԿ հրահանգիչ, փ/ծ ավագ լեյտենանտ–խաղարկման և վերլուծության խմբի անդամ
7	Մելիքսեթյան Անդրանիկ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ Իջևանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ-գործնական միջոցառումների խմբի ղեկավար
8	Սաղաթելյան Հայկ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ Իջևանի հրշեջ–փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, փ/ծ կապիտան-գործնական միջոցառումների խմբի անդամ
9	Վանեսյան Միեր	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ Իջևանի հրշեջ – փրկարարական ջոկատի խմբի պետ, փ/ծ ավագ լեյտենանտ - գործնական միջոցառումների խմբի անդամ

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժ/պ Ֆ. Ափինյան